ՈԱԱԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի «Գլաձոր» համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Երևանի «Գլաձոր» համալսարան
Հապավումը	ԵԳՀ
Գործունեության հասցեն	Գրիգոր Լուսավորչի 7/1 , Երևան, 0010, ՀՀ
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Երևանի «Գլաձոր» համալսարանի (այսուհետ՝ ԵԳՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ԵԳՀ -ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԵԳՀ -ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը.

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	**5 մարտի 2012**
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	**2 հոկտեմբերի 2012**
փորձագիտական այցի իրականացում՝	**3-7 դեկտեմբերի 2012**
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	**1 մարտի 2013**
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	**14 փետրվարի 2014**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ԵԳՀ-ը հիմնադրվել է 1990 թ.՝ որպես ուսումնաարտադրական կոոպերատիվ և իր գիտակրթական գործունեությունը ծավալել է հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ոլորտում: Ներկայումս համալսարանն արտոնված է կադրեր պատրաստել բակալավրիատի հինգ մասնագիտություններով (իրավագիտություն, ֆինանսներ, միջազգային հարաբերություններ, լրագրություն, օտար լեզու), ինչպես նաև՝ կրթական ծրագրեր իրականացնել մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում:

Իր գործունեության ընթացքում համալսարանը եվրոպական չափանիշներով և ուղենիշներով ինստիտուցիոնալ հավատարմագրում չի անցել. սույն գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է: 2010թ. բուհում իրականացվել են փորձնական ծրագրային հավատարմագրման գործընթացներ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության գծով: ԵԳՀ-ը 2011թ. ստեղծել է Որակի ապահովման կենտրոն, 2012թ. ստացել Համաշխարհային բանկի դրամաշնորհ որակի ներքին ապահովման համակարգի ներդրման նպատակով: Վերոնշյալ հանգամանքները նպաստել են կրթության որակի ապահովման մի շարք մեխանիզմների ներդրմանը և որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման որոշակի փորձի ձեռքբերմանը:

ԵԳՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքները հիմնականում համադրելի են «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակում» բակալավրի մասնագիտական հմտությունների ու կարողությունների վերաբերյալ պահանջներին և նպատակամիտված են աշխատաշուկայում մրցունակ մասնագետների ձևավորմանը: Ծրագրերի մեծ մասը վերջին տարիներին մի քանի անգամ վերանայվել է: Բենչմարքինգի իրականացման արդյունքում մշակվել են դասընթացների ծրագրերի նկարագրեր կրթական վերջնարդյունքներով (գիտելիք, հմտություն, կարողություն):

Համալսարանում իրականացվող հետազոտության արդյունքները էական կիրառական նշանակություն չունեն, թույլ է դասավանդման և հետազոտության միջև կապը: Գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ներգրավման գործող մեխանիզմները նույնպես սակավարդյունավետ են: Խնդրի արմատական լուծումն առայժմ քիչ հավանական է

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

բուհի թույլ ֆինանսական հնարավորությունների պատճառով: Հիմնականում ուսանողների վարձավճարներից ձևավորվող ֆինանսական ռեսուրսները մեծ մասամբ ծախսվում են աշխատավարձի վճարման համար և չեն ծառայում գիտահետազոտական գործունեության խրախուսման, դասավանդողների երիտասարդ սերնդի մասնագիտական աճի կամ դասավանդողների որակավորման բարձրացման նպատակներին: Միջոցներ գրեթե չեն հատկացվում նաև միջազգային համագործակցության համար, ինչը վտանգում է ոլորտի կայունությունը, ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը:

Համալսարանի ենթակառուցվածքներն ու մարդկային ռեսուրսները հիմնականում բավարար են առաքելության ու ռազմավարական խնդիրների լուծման համար: Սակայն պետական բուհերի հետ մրցակցային դաշտում վերջին տարիներին ԵԳՀ-ը գնալով կորցրել է իր գրավչությունը. ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող մեխանիզմները չեն ապահովել դիմորդների կայուն հոսք, հատկապես՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգում: ԵԳՀ-ը բակալավրիատի ուսանողների թվաքանակի կրճատումը փորձել է փոխհատուցել հեռակա ուսուցման ու մագիստրոսական ծրագրերի ընդլայնմամբ: Համալսարանը ներկայումս հնարավորություն չունի համակողմանիորեն գնահատելու կրթական, խորհրդատվական, վարչական և այլ ծառայությունների որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը, քանի որ դեռևս չեն ձևավորվել ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵԳՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում բաղկացած է արհեստավարժ դասավանդողներից, ովքեր իրենց մասնագիտական ներուժով համապատասխանում են կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը: 2011-12 ուս. տարում համալսարանում դասավանդել է 66 դասախոս, որոնցից 38-ը (58 տոկոսը) հիմնական աշխատողներ են, իսկ 43-ն (65 տոկոսը) ունեն գիտական աստիճան: Դասախոսների շուրջ 40 տոկոսի տարիքը 65-ից բարձր է: Վերջին տարիներին ուսանողների թվաքանակի անկման հետ կապված համալսարանում կրճատվում է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Ցածր աշխատավարձը և մոտիվացիայի պակասը բարդացնում են երիտասարդ և որակյալ մասնագետների ներգրավման խնդիրը, և այս գործոնը կարող է լուրջ ռիսկեր ծնել:

Պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասն ակտիվորեն ներգրավված է գիտահետազոտական աշխատանքներում, սակայն չափազանց փոքր թիվ են կազմում նրանց հրապարակումները գրախոսվող միջազգային պարբերականներում: Միջազգային փորձառություն ունի դասախոսական կազմի աննշան մասը: Համալսարանն իր առջև խնդիր է դնում ապահովել պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի կողմից համակարգչային ծրագրերի և օտար լեզուների տիրապետման բարձր մակարդակ, որը, եթե հաջողվի իրականացնել, խրախուսելի նախաձեռնություն է, որակական առաջընթացի ապահովման կարևոր միջոց:

Համալսարանն իր գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը ապահովելու նպատակով փորձում է կիրառել մի շարք մեխանիզմներ, սակայն դեռևս չունի արտաքին շահակիցների կարիքների վերհանման անհրաժեշտ հիմքեր և գործիքներ, հասարակությանը հաշվետու լինելու պաշտոնապես հաստատված քաղաքականություն և

ընթացակարգեր, ինչն անուղղակիորեն հանգեցրել է հետադարձ կապի ոչ արդյունավետ պրակտիկայի ձևավորման:

Համալսարանը ձգտում է արտաքին կապերի և միջազգայնացման կանոնակարգված գործընթացների արմատավորման ուղղությամբ որոշակի ծրագրեր իրականացնել, սակայն նախատեսված քայլերը հիմնականում կրում են հայեցակարգային բնույթ, ամրագրված չեն համապատասխան աշխատանքային ծրագրերով, իսկ նյութական և ֆինանսական ռեսուրսները դեռևս անբավարար են ուսումնառողների և դասավանդողների միջազգային շարժունության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Համալսարանում կարևորվում է կրթության որակը և որակի ապահովումը, ինչն առայժմ առավելապես պայմանավորված է արտաքին պահանջներով: Տրամադրվում են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների կազմակերպման համար: Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս կայացման փուլում է. ձևավորվել են որակի ապահովման համապատասխան կառույցներ, մշակվել՝ որոշ ընթացակարգեր, սակայն թույլ է շահակիցների ներգրավվածությունը համակարգում, իսկ հիմնական մեխանիզմները դեռևս պետք է ձևավորվեն:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Համալսարանն ունի ռազմավարական ծրագրերում ամրագրված հստակ առաքելություն, նպատակներ ու խնդիրներ, որոնք ընդունվում և իրագործվում են համալսարանի շահակիցների կողմից:
2. Համալսարանում գործում է կառավարման կանոնակարգված համակարգ, առկա են ՄԿԾ-ների իրականացման խնդիրների լուծմանը ծառայող ֆունկցիոնալ ստորաբաժանումներ:
3. Կրթական ծրագրերի բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը համապատասխանում են ՀՀ Պետական կրթական չափորոշիչներին: Ներդրվել են կրեդիտների կուտակման և փոխանցման, ինչպես նաև՝ գնահատման նոր՝ բազմագործոնային համակարգեր:
4. Համալսարանում կիրառվում է արհեստավարժ մասնագետների ներգրավման հաջողված պրակտիկա՝ պրոֆեսորադասախոսական կազմի համալրման կադրային, մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջների առաջադրմամբ:
5. Համալսարանում կայացել կրթահամակարգը մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական աստիճաններում, ընդ որում այս մակարդակում կրթությունը շարունակողների թվում մեծ թիվ են կազմում այլ բուհերի շրջանավարտները:
6. Համալսարանում ստեղծված են ուսումնառության համար համեմատաբար բարենպաստ շենքային պայմաններ՝ լսարաններ, լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ, սրահներ, գրադարան:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմների ու գործիքների ոչ բավարար հստակությունը,
2. ֆինանսների տնօրինման քաղաքականության և ընթացակարգերի, ինչպես նաև մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը,

3. մասնագիտության կրթական ծրագրերի գնահատման և վերանայման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր մակարդակը,
4. բակալավրիական կրթական ծրագրերի գծով ուսանողների թվաքանակի անկումը վերջին 5 տարվա ընթացքում,
5. պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների զարգացման սահմանափակ հնարավորությունները,
6. միջազգային գիտահետազոտական նախագծերում համալսարանի թույլ ներգրավվածությունը,
7. համալսարանի բյուջեի մուտքերի ապահովումը ուսման վարձավճարների հաշվին, եկամուտների դիվերսիֆիկացման բացակայությունը,
8. համալսարանի հասարակական պատասխանատվության ու հաշվետվողականության ապահովման մեխանիզմների բացակայությունը,
9. արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությաան և առանձին ծրագրերի բացակայությունը,
10. որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր աստիճանը:

Համալսարանին առաջարկվում է.

Առաքելություն և նպատակներ

1. Հնարավորինս կոնկրետացնել բուհի առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները, ակտիվացնել համալսարանի Որակի ապահովման և Կարիերայի կենտրոնների գործունեությունը ներքին և արտաքին շահակիցների կարիքների լիարժեք բացահայտման ուղղությամբ:

Կառավարում ու վարչարարություն

2. Մեծացնել որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը, մշակել հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնցով ուսանողները և դասավանդողները կարող են առավել արդյունավետորեն ներգրավվել որոշումների կայացման գործընթացում:
3. Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեջ ընդգրել բոլոր շահակիցներին և ստորաբաժանումներին՝ մշակելով բոլոր գործոնների վերհանման, ուսումնասիրության, գնահատման և հաշվառման հստակ ընթացակարգեր:
4. Հետազոտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներ դարձնել արտաքին շահակիցներին, թեմատիկայի մշակմանը մասնակից դարձնել նրանց:
5. Ստեղծել ֆինանսների տնօրինման ընթացակարգ և դրա հաշվետվողականության մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրեր

6. Նախատեսել և կազմակերպել ընտրովի և ֆակուլտատիվ դասընթացներ անկախ ուսանողների քանակից:
7. Մշակել քննությունների և ստուգումների անցկացման կանոնակարգ՝ բողոքարկման և վերահանձնման հստակ մեխանիզմների առկայությամբ:

8. Իրականացնել բենչմարքինգ բոլոր մասնագիտությունների համար, բոլոր կրթական աստիճաններում, բոլոր գործընթացների գծով:
9. Կանոնակարգել ՄԿԾ-ների մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումը և պարբերական վերանայումը:
10. Կրթական ծրագրերը մշակելիս և դրանց ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրելիս ապահովել բոլոր շահակիցների մասնակցությունը:

Ուսանողներ

11. Վերանայել ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը այն հաշվով, որ համալսարանը կարողանա բարձրացնել իր գրավչությունը և ընդլայնել պոտենցիալ դիմորդների թվաքանակը:
12. Կանոնակարգել լրացուցիչ պարապմունքների կազմակերպման գործընթացները ուսանողներին ակադեմիական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով, լրացուցիչ պարապմունքներ նախատեսել ցածր առաջադիմությամբ համալսարան ընդունված ուսանողների համար՝ բարձրացնելով նրանց մակարդակը:
13. Մշակել վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ և ժամանակացույց:
14. Ակտիվացնել Կարիերայի կենտրոնի գործունեությունը՝ նպաստելով ուսանողների և գործատուների կապի ձևավորմանը, ուսանողին տեղեկացնել թափուր աշխատատեղերի մասին:
15. Համալսարանում ձևավորել հետազոտական աշխատանքները համակարգող կառույց գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի գլխավորությամբ, որի կազմում կներառվեն նաև ՈւԳԸ ակտիվիստները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

16. Մշակել ատեստացիաների անցկացման, փոխադարձ գնահատումների, կատարողականների վերլուծության հստակ ընթացակարգեր, որոնցով կարելի է ավելի հստակ գնահատել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄԿԾ-ների նպատակներին և ակնկալվող արդյունքներին:
17. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ուղղությունները նախանշելուց բացի մշակել նաև այդ նպատակին ծառայող ֆինանսական և այլ ռեսուրսների հատկացման ընթացակարգեր:
18. Ներդնել նաև կադրերի ընտրության մրցութային կարգ, առանձնակի ուշադրություն դարձնել սկսնակ դասախոսների, ապագա դասախոսների՝ դասախոսական աշխատանքին նախապատրաստմանը:
19. Ձևավորել դասախոսների մասնագիտական առաջընթացի գնահատման բազմագործոն սխեմա:

Հետազոտությունը և զարգացում

20. Կոնկրետացնել բուհի հետաքրքրություններն ու ռազմավարությունը հետազոտական ոլորտում, մշակել բուհի և/կամ ամբիոնների հետազոտությունների միասնական ուղղություններ:

21. Մշակել երիտասարդ աշխատակազմի խրախուսման, ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի ընթացակարգեր:
22. Ապահովել համալսարանում տարվող հետազոտությունների կապը ուսումնական գործընթացների հետ:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

23. Ակտիվացնել համագործակցությունն այլ հաստատությունների հետ լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու և ուսումնական միջավայրը բարելավելու համար:
24. Մշակել ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման չափանիշներ՝ հիմնված կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծության վրա:
25. Առավել թափանցիկ և հրապարակային դարձնել հետազոտությունների զարգացման և նորարարությունների նպատակով բյուջեի բաշխումը, պլանավորել բյուջեի ծախսումների օպտիմալ կառուցվածքի սխեմա և առաջնորդվել դրանով:

Հասարակական պատասխանատվություն

26. Մշակել համապատասխան մեխանիզմներ /հաշվետվողականության սահմանված կարգ/, որոնցով համալսարանը կհավաստիանա, որ ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության համակարգը բավականաչափ արդյունավետ է:
27. Մշակել պետական և հասարակական կազմակերպությունների հետ երկարաժամկետ, կայուն համագործակցության ծրագրեր, որոնց իրագործումը կնպաստի հասարակության հետ կապերի ամրապնդմանը;
28. Ներդնել համալսարանի կողմից հասարակությանը գիտելիքի փոխանցման և ծառայությունների մատուցման արդյունավետ ձևեր:

Արտաքին կապեր և միջազգայնացում

29. Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության մշակումից բացի կազմել նաև գործողությունների հստակ ծրագիր առաջիկա մի քանի տարիների համար;
30. Համակարգված դարձնել աշխատակազմի համար նախատեսվող օտար լեզվի դասընթացները, ստեղծել ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների իմացությունը պարզող արդյունավետ մեխանիզմներ:
31. Համալսարանում ստեղծել փորձի փոխանակմանը, միջազգայնացմանը և զարգացմանը նպաստող միջավայր, բարելավել արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքը:

Որակի ներքին ապահովման համակարգ

32. Մշակել ԵԳՀ-ի կրթության որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան ընթացակարգեր և որակի ապահովման ձեռնարկ: Բոլոր փաստաթղթերը հրապարակել համալսարանի կայք-էջում,
33. Մշակել և հաստատել որակի ներքին համակարգի կառուցվածքը և հստակորեն տարանջատել առանձին միավորների դերը, գործառույթները, պարտականությունները և իրավասությունները:

34. Գնահատել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով համալսարանի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը և արդյունքները հաշվի առնել ռեսուրսների պլանավորման ժամանակ:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

Երևանի «Գլաձոր» համալսարանն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և Ժամանակացույց» (այսուհետ՝ Ծրագիր):

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Երևանի «Գլաձոր» համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման զեկույցում նշված թերությունների վերացման բուհի մշակած ծրագիրը, **եզրակացնում** է.

Համաձայն Ծրագրի՝ ԵԳՀ-ը հանձն է առնում իրականացնել Հավատարմագրման բոլոր տասը չափանիշների տիրույթներում նկարագրված խնդիրների շուրջ փորձագիտական խմբի տրամադրված բոլոր խորհրդատվությունները: Խումբը գտնում է, որ հրատապ փոփոխություններ պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են Ծրագրում, և ըստ «ԵԳՀ գործունեության բարելավման գործողությունների ժամանակացույցի», ռեսուրսներ են տրամադրվելու դրանց իրականացմանը մոտակա երկու տարիների ընթացքում՝ մինչև 2016 թվականի վերջը:

Փորձագիտական խումբը, սակայն առանձնացնում է մի շարք խորհրդատվություններ, որոնց գործողությունները բավարար չափով չեն արտացոլում բուհի կողմից նախատեսված բարելավման քայլերի վերաբերյալ պատկեր: Մասնավորապես.

ա/ *Կառավարումն ու վարչարարությունը* տիրույթում խորհուրդ էր տրվել մեծացնել որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը, ուսանողներին և դասավանդողներին ներգրավել որոշումների կայացման գործընթացում, սակայն բուհի ներկայացրած ծրագրում այդ ուղղությամբ նախատեսվում են միայն բուհի կառավարմանը ներքին շահակիցների մասնակցության ձևերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում, ինչպես նաև՝ հարցումների անցկացում ներքին շահակիցների ներգրավվածության քաղաքականության արդյունավետությունը պարզելու համար /4.3.1. և 4.3.2. կետեր/:

բ/ *Ուսանողները* տիրույթում խորհուրդ էր տրվել կանոնակարգել լրացուցիչ պարապմունքների կազմակերպման գործընթացները ուսանողներին ակադեմիական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով: Բուհը մասամբ է կարևորել այս հրատապ խորհրդատվությունը, քանի որ նախատեսում է մշակել լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և անցկացման կարգը միայն 2015 թ. սեպտեմբերին և այն

էլ՝ միայն մագիստրատուրայում ոչ բազային մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար /կետ 18.2.1./:

գ/ Դասախոսների՝ ըստ կատարողականի գնահատումը նույնպես նախատեսված է իրականացնել բավականին ուշ՝ 2015թ. դեկտեմբերին, առանց հստակեցնելու գնահատման վերջնարդյունքները, իսկ որպես պատասխանատու մարմիններ նշված են ոչ թե ամբիոնները, այլ ռեկտորատը և ուսումնական մասը /կետ 22.5.1./

դ/ Ըստ էության շրջանցվել են «առավել թափանցիկ և հրապարակային դարձնել հետազոտությունների զարգացման և նորարարությունների նպատակով բյուջեի բաշխումը» և «պլանավորել բյուջեի ծախսումների օպտիմալ կառուցվածքի սխեմա և առաջնորդվել դրանով» խորհրդատվությունները: Հետազոտական ոլորտում բյուջեն որպես ֆինանսական ռեսուրս նախկինի պես նախատեսվում է օգտագործել միայն հրատարակչական ծախսեր հոգալու համար /կետ 27.4.2/: Ծրագիրն, ընդհանուր առմամբ, ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության տեսակետից, համեմատաբար թույլ է հիմնավորված. նախատեսված ավելի քան 170 քայլերի իրականացման համար 52 դեպքում հիշատակված է մարդկային ռեսուրսը /ԵԳՀ աշխատակազմը/ և միայն 12 դեպքում՝ ԵԳՀ բյուջեն:

ե/ Ներկայացված ծրագրում բուհն ավելի շատ կարևորել է գործընթացների փաստաթղթային կանոնակարգումը՝ տարբեր քաղաքականությունների, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակումը և ոչ թե դրանց իրականացումը և ազդեցությունների ուսումնասիրումը՝ դրանց արդյունավետության գնահատման կոնկրետ ցուցիչների միջոցով: Վերջնարդյունքները մի շարք դեպքերում ձևակերպված են այնպես, որ ցույց չեն տալիս, թե որակական ինչպիսի փոփոխություններ կարելի է ակնկալել տվյալ գործողության ավարտին:

Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ Երևանի «Գլաձոր» համալսարանի կողմից ներկայացված ծրագրում նախատեսված միջոցառումների հաջորդականությունը և ժամանակացույցը տրամաբանական են, բոլոր տեղամասերում առկա են գործողություններ և քայլեր, բոլոր քայլերի համար հստակ նշված են պատասխանատու անձը կամ աշխատանքային խումբը, տրամադրվող ռեսուրսները, իսկ քայլերի մեծ մասը իրագործելի են իրատեսական ժամկետներում: Հստակ նկարագրված է, թե ինչպես պետք է իրականացնել յուրաքանչյուր քայլը, նշված են պատասխանատուները և գործողությունների իրականացման ժամկետները: Բարելավման պլանից պարզ դարձավ, որ ԵԳՀ-ն ընկալել և ընդունել է փորձագիտական խմբի խորհրդատվությունների մեծ մասը:

Եզրահանգում. Բարելավման պլանում առկա բայլերի ավելի կոնկրետ իրականացման պայմաններում մոտակա երկու տարվա ընթացքում ԵԳՀ-ը կունենա հնարավորություն բարելավելու համալսարանի գործընթացները կանոնակարգող նորմատիվային դաշտը և կբարելավի հիմնական գործողությունների իրականացումը, որից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ԵԳՀ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա՝

1) առաջնահերթ լուծում տալ Մասնագիտության կրթական ծրագրեր, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Հասարակական պատասխանատվություն, Արտաքին կապեր և միջազգայնացում, Որակի ներքին ապահովման համակարգ ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Պրոֆ. Հարություն Մարզպանյան,
փորձագիտական խմբի ղեկավար

Աննա Կարապետյան,
ՈԱԱԿ Համակարգող

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

- **Պրոֆ. Հարություն Մարգպանյան,** տնտ. գիտ, դոկտոր, Ավ. Մկրտչյանի անվ. տնտեսահիրավագիտական համալսարանի պրոռեկտոր, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, խմբի ղեկավար,
- **Ֆաբրիս Հենարդ,** Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Բարձրագույն կրթության կառավարում» ծրագրի ղեկավար, Ֆրանսիա, խմբի անդամ,
- **Դոց. Գուրգեն Հովհաննիսյան,** աշխ.գիտ.թեկն., ԵՊՀ բակալավրիատի բաժնի վարիչ, խմբի անդամ,
- **Դոց. Սամվել Մխիթարյան,** տեխ.գիտ.թեկն., Գյումրու «Տեխնոպարկ» տնտեսական զարգացման հիմնադրամ, Հայ-ռուսական սլավոնական համալսարանի դասախոս, խմբի անդամ,
- Արփինե Մկրտչյան, Վ.Բրյուսովի անվ. Լեզվաբանական համալսարանի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, խմբի անդամ:

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ.

- **Աննա Կարապետյան,** ՈԱԱԿ Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, խմբի աշխատանքների համակարգող,
- **Ալինա Խաչիկյան,** ՈԱԱԿ Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ, ԵԳՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի թարգմանիչ,
- **Լիլիթ Ղազարյան,** ՈԱԱԿ քարտուղարության մասնագետ, ԵԳՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի քարտուղար-աղագրող: